13.891

313
Z-14

313
Հ-14
16 SEP 2006
Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛ք.
Ա 912-09

ՀԿԿ. Կ (Բ) Կ ԿԵՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԲԱԺԻՆ

ԺՈՂՏՆՏՀԱՇՎԱՌՔԻ ԱՆԴՐԿՈՎԿ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

404810
1003/3892

1936 ԹՎԻ ՀՈՒՆՎԱՐԻ ՄԵԿԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

(ՆՅՈՒԹԵՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿՏԻՎԻ ՀԱՄԱՐ)

Թիֆլիս 1935 թ.

Հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մասիսյան

29.05.2013

13891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Անասունների համամիութենական ցուցակագրությունը--«ՊՐԱՎԴԱ»-ի 1935 թ. դեկ. 8-ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ 3
2. Մինչև 1936 թ. հունվարի 1-ը յեղած անասուններին ցուցակագրելու մասին—ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ 10
3. Անասունների 1936 թ. հունվարյան ցուցակագրությունն անցկացնելու մասին—ՀԱՄ. Կ (Բ) Կ ԱՆԴԻՐՑԵՐԿԿՈՄԻ 1935 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ 14
4. 1936 թ. հունվարի 1-ի անասունների ցուցակագրությունն անցկացնելու մասին ԱՍՓԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ . . 19
5. Անասունների 1936 թ. հունվարյան ցուցակագրությունն անցկացնելու համար պարզեվատրման ֆոնդ ստեղծելու մասին—ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ 23
6. Ցուցակագրության խնդիրը և կազմակերպչական պլանը 25

Պատ. խմբագիր՝ Կ. ՉԱՓԱՐԻՉԵ

გამომცემლობა „ტექნიკა და შრომა“-ს სტამბა

მთავლიტი № В-1315 შეკვ. № 1757 ტირაჟი 1.000

«ՊՐԱՎԴԱ»-Ի 1935 Թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անասնաբուծությունը գյուղատնտեսության մյուս բնագավառներից ավելի ուշ կանգնեց վերելքի ուղու վրա։ Դա հասկանալի է։ Անասնաբուծական շրջաններում ավելի ուժեղ եյին կուլակության դիրքերը։ Վերակառուցման շրջանի տարիներում անասունները մորթելու կուլակային ագիտացիան կատարեց իր գործը։ Մինչև 1933 թիվը դեռ նկատվում եր անասունների քանակի անկում, միայն 1934 թիվը դարձավ բեկման տարի, յերբ անասնաբուծությունը գնաց լեռն ի վեր։ Ընկեր ՍՏԱԼԻՆԻ կոչը վողջ կուսակցությանը, մեր բոլոր աշխատավորներին, վերցնելու ա-[illegible]թյունն իրենց ձեռքը, կենտրոնա-[illegible] և կառավարության ձեռք առած [illegible]ը թույլ տվին արագ կերպով կան-[illegible]ասունների քանակի անկումն ու [illegible]նասնաբուծությունը լայն ուղու

313
Z-14

Կուսակցությունը գործադրության մեջ դրեց այնպիսի գործիք, ինչպիսին է անասնաբուծության զարգացման պետական պլանը։ Վոչ թե տարերայնությունն այլ պետական կայուն առաջադրանքը դրվեց վողջ աշխատանքի հիմքում։ Բոլշևիկները կրկին անգամ ցույց տվին մեր գյուղատնտեսության ամենադժվարին հարցի հեղափոխականորեն լուծման որինակ։ Անասնաբուծության զարգացման պետական պլանը լիովին արդարացրեց իրեն, և այժմ կարելի յե կատարել մի քանի հանրագումարներ։

Ամենից առաջ մատղաշի մասին, հոտի հետագա ընդլայնման պահեստի մասին։ Կարելի յե հավատացած ասել, վոր 1935 թվի համար սահմանված՝ մատղաշի աճեցման պլանը վոչ միայն կկատարվի, այլև զգալի չափով կգերակատարվի։ Մինչև 1936 թ. հունվարի 1-ը պլանով պետք եր աճեցնել 11,3 միլիոն հորթ։ Սակայն անասունների հունիսյան ցուցակագրությունը ցույց տվեց, վոր հորթերն արդեն հաշվվում են 16.000.000 գլուխ։

Այս տարի զգալի չափով կրճատվել է մայր կովերի ամլությունը, լավ է պահպանվում մատղաշը։ Բարձրացել է անասունների քանակի մեծացման համար կոլխոզների և սովխոզների ղեկավարների պատասխանատվությունը, վերջապես, անասնաբուծության ֆրոնտում յերևացել են իրենց գործին նվիրված վոչ քիչ թվով աշխատողներ։ Այս բոլորը միասին առած թույլ տվին հասնելու հոտի արտադրողականության անհրաժեշտ տեմպերին։ Բավական է ասել, վոր այս տարի, որինակ, խոշոր յեղջյուրավոր անասունների քանակը ավելացել է 6,9 միլիոն գլխով։ Աճը, համեմատած անցյալ տարվա հետ, կազմում է 16,1 տոկոս, այն ժամանակ, յերբ վերականգնման շրջանի լավագույն տարիներում խոշոր յեղջյուրավոր անասունների տարեկան աճը գյուղացիական տնտեսություններում 5,5 տոկոսից չեր անցնում։ Անասունների քանակի աճման նման տեմպեր յուրահատուկ է այս տարի անասունների բոլոր տեսակների համար։ Ինչ վերաբերում է խոզաբուծությանը, ապա պետք է նշել, վոր անցել ենք մինչպատերազմյան մակարդակից։

Հատկապես պետք է ասել ձիերի մասին։ Ձիերի քանակի անկումը, համեմատած անասունների մյուս տեսակների հետ, ավելի մեծ եր։ Անդամ 1934 թվին, յերբ անասունների բոլոր տեսակների վերաբերմամբ ձեռք եր բերված քանակի աճ, ձիերի քանակը համենայն դեպս իջել եր 1,1 միլիոն գլխով։ Այս տարի ձեռք է բերված՝ ճիշտ է դեռ աննշան աճ, ընդամենը 300.000 գլուխ, բայց համենայն դեպս աճ է և վոչ թե անկում։

Ավելացել է կոլխոզնիկների անհատական ոգտագործման անասունների քանակը։ Գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրությունը այստեղ մեծ դեր խաղաց։ Մեծ թվով կոլխոզներ, ամբողջ շրջաններ, և անդամ յերկրամա-

սեր վերացրին կամ մոտ են կովազրկության վերացմանը։ Այդ տեսակետից զարմանալի չեն Ստալինգրադի յերկրամասի աջողությունները, որը մոտ ժամանակներս պետք է ռապորտ տա կովազրկության վերացման մասին։

Մի խոսքով, 1935 թիվը պետք է նշվի որպես հաղթական թիվ, ոչ միայն սովխոզների և կոլխոզների դաշտավարական տնտեսության մեջ, այլև անասնաբուծության մեջ։ Կոլխոզային ապրանքային ֆերմաները և անասնաբուծական սովխոզները, ինչպես փորձը ցույց տվեց, հանդիսացան անասնաբուծության պրոբլեմի լուծման ամենահիշատ և արագընթաց ուղին։

Բայց գործը դեռևս ավարտված չէ։ Հարկավոր է առաջիկայում ևս նույն ուշադրությամբ և համառությամբ, ճշտորեն հաշվի առնելով ամեն մի գլուխ անասունը, գերազանցորեն իմանալով բոլոր միջոցներն, առաջ շարժել անասնաբուծությունը։

Այս կապակցությամբ, մենք կուսակցական և խորհրդային բոլոր կազմակերպությունների ուշադրությունն ենք հրավիրում անասունների առ 1-ն հունվարի 1936 թ. դրության վերաբերյալ առաջիկա համամիութենական ցուցակագրության կարևոր նշանակության վրա։

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումն այս ցուցակագրության մասին, պետք է հայտնի լինի կուսակցական և խորհրդային աշխատողներին, բոլոր կոլխոզնիկներին,

սովխոզների դեկավարներին, բոլոր մենատնտեսներին։

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հանձնարարել է ԽՍՀՄ Պետպլանի Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Կենտրոնական Վարչությանը, անցկացնել Միության գյուղական և քաղաքային վայրերում խոշոր յեղջյուրավոր անասունների, վոչխարների, այծերի, խոզերի, ձիերի, ջորիների, եշերի և ուղտերի համամիութենական ցուցակագրություն բոլոր տնտեսություններում։ Բացի դրանից բոլոր կոլխոզներում, պետական և կոոպերատիվ տնտեսություններում պետք է անցկացնել մեղվափեթակների (ընտանիքների) հաշվառք։

Ցուցակագրությունը պետք է պատասխան տա—թե ինչ քանակության անասուններ ունի մեր յերկիրը, ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել այս տարվա հունիսյան ցուցակագրությունից հետո—հարցերին, ցուցակագրությունը պետք է փաստական նյութ տա 1936 թվի անասնաբուծության զարգացման պետական պլանը կազմելու համար։ Այս բոլորից դժվար չէ տեսնել առաջիկա աշխատանքի խոշոր քաղաքական և տնտեսական նշանակությունը։

Ժողովրդա-Տնտեսական հաշվառքի մարմիններին ոգնելու համար անհրաժեշտ է տալ ստուգված և պատրաստված աշխատավորներ ցուցակագրությունն անցկացնելու համար, լայնորեն ներգրավելով գյուղի բոլոր կուլտուրական ուժե-

ը, ԲՈՒՀ-երի և տեխնիկումների ուսանողության-նը։ Կուլտուրական աշխատավորների մի ամբողջ բանակ պետք է մասնակցի ցուցակագրությանը և կուսակցական կազմակերպությունների խնդիրը կայանում է նրանում, որպեսզի այս բանակը լինի քաղաքականապես գիտակից և կանգնած լինի պետության շահերի պաշտպանության դիրքերում։

Անասունների համամիութենական ցուցակագրությանը պետք է նախորդի մանրազնին նախապատրաստություն։ Կառավարությունը պահանջում է, որպեսզի անասունների գույքագրումն ավարտվի 1936 թ. հունվարի 1-ին, որվայներ լինեն անասունների քանակի աճման պլանի կատարման, մատղաշի աճեցման և այլնի մասին։ Սա բոլորովին ներգրասենյակային գործ չէ, այլ եյապես մեր անասնաբուծության լայն ստուգատես և մասսայական ստուգում այն բանի, թե ինչպես է կատարվել 1935 թ. անասնաբուծության զարգացման պետական պլանը։

Ցուցակագրության արդյունքները ցույց կտան ամեն մի յերկրամասի, շրջանի, կոլխոզի և սովխոզի աջողություններն ու թերությունները, նրանք ավելի լավ կվկայագրեն անասնաբուծության աշխատավորներին։

Ցուցակագրությանը նախապատրաստվելը պետք է լայն կերպով ոգտագործվի անասունների ձմեռումը ճիշտ կազմակերպելու համար։ Պետք է մոռանալ այն, թե վորքան պատասխանատու յե անասնաբուծության այդ ժամանակաշրջանը, թե վորքան կարելի յե կորցնել, յեթե անմիջապես միջոցներ ձեռք չառնվեն ուղղելու սխալներն ու թերությունները։

Շրջագայությունները տնտեսություններում, վերահսկիչ ստուգումները պետք է կազմակերպել դերազանց։ Անասունների հունիսյան ցուցակագրությունը ցույց տվեց, վոր քիչ թշնամիներ չկան, վորոնք կոլխոզնիկներին և մենատնտեսներին հրում են դեպի անասուններին հաշվառքից թաքցնելը։ Պետք է հիշեցնել հանցավորների քրեական պատասխանատվության մասին, անասունները թաքցնելու և վոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնելու համար։

Կուսակցությունն իր ձեռքն է վերցրել անասնաբուծության գործը։ Դա հաջողության ամենաճիշտ յերաշխիքն է։ Անասնաբուծության պրոբլեմը պետք է լուծվի հաջողությամբ։ Կոլխոզային և սովխոզային միլիոնավոր ակտիվիստներ, կուսակցականներ և վոչ-կուսակցականներ պետք է ոգնեն կուսակցությանն այս դժվարին գործում։

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՄԻՆՉԵՎ 1936 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ՅԵՂԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողկոմխորհը վորոշում է՝

1. Հանձնարարել ԽՍՀՄ Պետպլանի Ժողովրդական Տնտեսական Հաշվառքի Կենտրոնական Վարչությանը ԽՍՀՄ գյուղական և քաղաքային բնակավայրերում, բացառությամբ Հեռավոր Հյուսիսի շրջանների, բոլոր տնտեսություններում կատարել խոշոր յեղջյուրավոր անասունների, վոչխարների, այծերի, խոզերի, ձիերի, յեզների, ավանակների, ուղտերի, նաև մեղուների փեթակների (ընտանիքների) համամիութենական ցուցակագրություն, բոլոր կոլխոզներում, պետական և կոոպերատիվային տնտեսություններում՝ առ մեկն հունվարի 1936 թ.։

Հանձնարարել ԽՍՀՄ Պետբանկի Ժողովրդական Տնտեսական Հաշվառքի Կենտրոնական Վարչությանը մասսայական վերահսկիչ ստուգման յենթարկել ցուցակագրության տվյալները, ընդգրկելով ստուգմամբ կոլխոզնիկների և մենատնտեսների տնտեսությունների 10 տոկոսը։

2. Պարտավորեցնել դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ժողկոմխորհներին, յերկրային (մարզային) և շրջանային գործկոմներին, քաղաքային և գյուղական խորհուրդներին, ինչպես և քաղաքային տիպի ավանների խորհուրդներին.

ա) Ծավալել ազգաբնակության մեջ բացատրական աշխատանք՝ անասունների առաջիկա ցուցակագրության նշանակության և խնդիրների շուրջը։

բ) ապահովել Ժողովրդական Տնտեսական Հաշվառքի Կենտրոնական Վարչության ժարմինները անհրաժեշտ քանակությամբ ստուգված և պատրաստված աշխատողներով՝ ցուցակագրությունը կատարելու համար, թույլատրելով ներգրավել այդ նպատակի համար, նաև ԲՈՒՀ-երի և տեխնիկումների ուսուցիչներին և ուսանողներին։

գ) շրջանների ներսում ապահովել ցուցակագրող աշխատողներին տեղափոխության միջոցներով։

3) Պարտավորեցնել հողագործության, հացահատիկային ու անասնաբուծական սովխոզներին և սննդային արդյունաբերության ժողկոմատներին, ինչպես և այն մյուս վարչություն-

ներին ու կազմակերպություններին, որոնք ունեն անասնաբուծական տնտեսություններ, սովխոզների բանմատակարարման տնտեսությունների և կոոպտնտեսությունների դիրեկտորներին, նաև կոլխոզների նախագահներին, մինչև ցուցակագրության սկիզբը, ավարտել անասունների հաշվառումը առ մեկն հունվարի 1936 թ. և պատրաստել տվյալներ՝ 1935 թ. անասունների քանակության, մատղաշների աճեցման և հոտի վիճակի պլանի կատարման մասին։

4. Պարտավորեցնել անասուններ մթերող կոմիտեյի շրջանային գրասենյակներին տրամադրել ժողովրդական տնտեսական հաշվառքի շրջանային տեսուչներին մինչև 1935 թ. դեկտեմբերի 20-ը ստուգված տվյալներ՝ մսի մթերումների պլանի կատարման մասին։

5. Պարտավորեցնել անասուններ ունեցող պետական և կոոպերատիվային տնտեսությունների դիրեկտորներին, նաև կոլխոզների նախագահներին տրամադրել ցուցակագրողներին՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի հաստատած ձևերով՝ ճշգրիտ և անձամբ ստուգված տեղեկություններ վերոհիշյալ տնտեսություններին պատկանող անասունների թվի մասին առ մեկն հունվարի 1936 թ.։ Բացի դրանից, պարտավորեցնել վերոհիշյալ տնտեսությունների դիրեկտորներին՝ ցուցակագրողներին տեղեկություններ տալ սովխոզների (կոոպտնտեսություններ) հողամասում բնակվող բանվորների և ծառայողների տնտեսությունների թվի մասին։

6. Անասունները ցուցակագրելուց թագցնող և անասնաբուծության զարգացման պետական պլանի կատարման մասին սխալ տեղեկություններ ներկայացնող անձինք կենթարկվեն քրեական պատասխանատվության։

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա—Կրեմլ.
1935 թ. 4 դեկտեմբերի

ՀԱՄ. Կ. (Բ) Կ. ԱՆԴՐՅԵՐԿ-
ԿՈՄԻ 1935 Թ. ՆՈՅԵՄԲԵ-
ՐԻ 17-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ 1936 Թ. ՀՈՒՆՎԱՐՅԱՆ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկկոմը պարտավորեցրեց Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Անդրբկովկասյան և հանրապետական վարչություններին 1936 թ. հունվարի 1-ից սկսել բոլոր տեսակի անասունների ցուցակագրություն, իսկ լեռնային և առանձին նախալեռնային վայրերում ներկա տարվա դեկտեմբերի 15-ից մինչև 20-ը։

Միաժամանակ Համ. Կ. (բ) Կ. Արդրյերկկոմը առաջարկեց հանրապետությունների Կենտկոմներին և Ժողկոմխորհներին մինչև դեկտեմբերի 15-ն ավարտել ցուցակագրության նախապատրաստական բոլոր աշխատանքներն ու կազմակերպել ցուցակագրության խնդիրների լայն քննարկումը շրջաններում, սովխոզներում, կոլխոզներում, անասնաբուծական - ապրանքային

ֆերմաներում, գյուղխորհուրդներում, նախնական կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններում։

Ցուցակագրության նախապատրաստման և անցկացման գործում պիտի ներգրավել անվանի մարդկանց, անասնաբուծության գերազանցներ-ստախանովականներ։

Հանրապետական և շրջանային թերթերի խմբագիրները պարտավոր են մամուլում լուսաբանելու ցուցակագրության խնդիրները, նրա տնտեսական-քաղաքական նշանակությունը, ցուցակագրության նախապատրաստման և անցկացման ընթացքի մասին։

Ցուցակագրության բոլոր աշխատանքները պիտի անցկացվեն այնպես, վորպեսզի անասունների ամբողջ քանակությունն ընդգրկվի լիովին։

Հանրապետությունների Կենտկոմներին և Ժողկոմխորհներին հանձնարարված է, ամեն մի շրջանի համար, առանձնացնել անասունների ցուցակագրությունն անցկացնող՝ Կենտկոմի և Ժողկոմխորհի լիազորներ՝ գյուղատնտեսության բնագավառում պատասխանատու և վորակավորյալ աշխատավորներից, այն հաշվով, վորպեսզի այդ աշխատավորները ցուցակագրության ամբողջ ընթացքում գտնվեն շրջանում։

Հանրապետությունների Կենտկոմներին կից հրավիրվում են ցուցակագրության կազմակերպման և անցկացման հարցերին վերաբերող կուսակցական խորհրդակցություններ՝ շրջգործկոմ-

ների նախագահների, Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Վարչության տեսուչների, անասնաբուծական շրջանների Հողբաժինների վարիչների և շրջանում ցուցակագրությունն անցկացնող՝ հանրապետական կենտկոմների և Ժողկոմխորհների բոլոր լիազորների մասնակցությամբ։

Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկկոմին կից Խորհուրդ-վերաստուգումը հանրապետությունների կենտկոմների հետ միասին, համաձայն Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկկոմի վորոշման, մինչև դեկտեմբերի 20-ը պիտի անցկացնեն ցուցակագրության նախապատրաստական աշխատանքների ընթացքի քննությունը, ցուցակագրության միջոցին հետևեն ցուցակագրության ընթացքին շրջաններում, հատկապես քննելով ամեն մի հանրապետության մեջ վոչ պակաս, քան 5 շրջանի աշխատանքները, այդ շրջաններում կրկնակի քննությամբ ընդգրկելով անցկացրած ցուցակագրությամբ ընդգրկված տնտեսությունների վոչ պակաս քան 20%։

Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկկոմը ցուցակագրության անցկացման անձնական պատասխանատվությունը դնում է շրջգործկոմների նախագահների վրա, պարտավորեցնելով նրանց ցուցակագրության անցկացման ընթացքի անձնական քննությամբ ապահովել բոլոր անասունների լրիվ ընդգրկումը ցուցակագրությամբ, առանձին ուշադրություն դարձնելով մենատնտես սեկտորի անասունների հաշվառքին։

Շրջգործկոմները պարտավոր են ապահովել

4048 1009/3892

վերաստուգիչ (կոնտրոլ) շրջագայությունների ընթացքը ձմեռային արոտատեղիներում, թույլ չտալով առանձին արոտատեղիների կամ բինների բացթողումը, այդ աշխատանքների համար առանձնացնելով առավել փորձված աշխատողների։

Ցուցակագրության անցկացման ամբողջ ընթացքում, ցուցակագրության բոլոր աշխատողները շրջգործկոմների կողմից պիտի անընդհատ ապահովված լինեն փոխադրության միջոցներով։

Շրջանի ցուցակագրության հանրագումարներն անհրաժեշտ է քննության յենթարկել շրջկոմի բյուրոյի և շրջգործկոմի նախագահության միացյալ նիստում, վորի հետևանքում նշել շրջանում անասնաբուծության ամրապնդման և նրա հետագա աճումն ապահովող կոնկրետ միջոցառումներ։

Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկկոմը պարտավորեցրեց Անդրհողժողկոմատին՝ իր սիստեմի միջոցով տալ համապատասխան ցուցումներ սովխոզներին և կոլխոզներին անասունների ցուցակագրությանը մասնակցելու նրանց պարտավորությունների մասին։ Հողբաժինները պարտավոր են ապահովել կոլխոզների, կոլխոզային-պարանքային ֆերմաների, սովխոզների անասունների ճշգրիտ ցուցակի կազմումը և ցուցակագրության նախորյակին ձմեռային արոտատեղիներն ուղարկել՝ արոտատեղիների հոծությանը և առանձին շրջաննե-

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մեշչանի անվան

բի, սովխոզների ու կոլխոզների աշխարհագրական դիրքին ծանոթ աշխատավորներ։

Անասունների չարամիտ թագցնելու բոլոր փաստերը Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Վարչության կողմից պետք է հանձնվեն դատախազության, իսկ հանրապետությունների դատախազությունները պարտավոր են շտապ կարգով պատասխանատվության յենթարկել անասունը թագցնելու մեջ մեղավոր անձանց։

Համ. ԼԿՅԵՄ Անդրյերկկոմին առաջարկված է ապահովել կոմյերիտական կազմակերպությունների լայն մասնակցությունն անցկացվող ցուցակագրության մեջ։

Ցուցակագրությունը պետք է ավարտվի 1936 թ. փետրվարի 15-ին և ցուցակագրության հանրագումարները պիտի ներկայացվեն Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Անդրկովկասյան վարչության և Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկկոմին փետրվարի վերջին։

ԱՍՖԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1936 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անասնաբուծության զարգացման պետական պլանի կատարման քննության նպատակով և Անդրկովկասում անասունների թվի մասին ճշգրիտ տեղեկություններ ստանալու համար, ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. հոկտեմբերի 16-ի վորոշման հիման վրա, Անդրժողկոմխորհը վորոշում է.

I. Հանձնարարել Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Վարչությանը.

1. Գյուղական և քաղաքային վայրերում անցկացնել բոլոր տնտեսությունների բոլոր տեսակի անասունների ցուցակագրություն, նույնպես և մեղրի փեթակների հաշվառք կատարել բոլոր կոլխոզներում, պետական և կոոպերատիվային տնտեսություններում՝ հատաձայն մինչև 1936 թ. հունվարի 1-ը յեղած դրության։

2. Այդ նույն ժամկետին հատուկ բրիգադ-

ների ոգնությամբ անցկացնել ձմեռային արոտատեղերում յեղած բոլոր անասունների ցուցակագրություն։

Անդրֆեդերացիայի զանազան շրջանների կլիմայական առանձնահատկությունների կապակցությամբ, անասունների ցուցակագրությունն սկսել ու ավարտել՝ Վերին-Ամանեթիայում և Մթա-Թուշեթում նոյեմբեր ամսում, իսկ մնացած լեռնային և առանձին մերձլեռնային շրջաններում ցուցակագրությունն սկսել դեկտեմբերի 15-20-ին։

3. Կոլխոզնիկների և մենատնտեսների 15% տնտեսություններում ցուցակագրություն կատարելուց հետո՝ անցկացնել ցուցակագրության տվյալների կոնտրոլ քննություն, ինչպես գյուղերում, այնպես ել արոտատեղիներում։

4. Ցուցակագրության ընթացքում քննության առնել պետական, կոոպերատիվ տնտեսություններում, կոլխոզներում և կոլխոզնիկների ու մենատնտեսների տնտեսություններում անասնաբուծության զարգացման՝ պետական պլանի իրացման ընթացքը։

II. Պարտավորեցնել Անդրհողժողկոմատին, Ցենտրոսոյուզին և անասնաբուծական տնտեսություն ունեցող վարչական այլ հիմնարկություններին ու կազմակերպություններին, սովխոզների, կոլխոզների դիրեկտորներին և բանմատաժինների (ՈՐՍ) տնտեսություններին, նմանապես կոլխոզների նախագահներին, մինչև 1936 թ. հունվարի 1-ի անասունների ցուցակագրությունը՝ անցկացնել անասունների ինվենտարիզացիա և պատրաստել ստուգված տվյալներ անասունների թվի աճեցման պլանի կատարման, մատաղ անասունների բազմացման և անասունների 1935 թվի շրջանառության մասին։

III. Հանձնարարել հանրապետությունների ժողկոմխորհներին.

1. Ինչպես ցուցակագրությանը նախապատրաստվելու բոլոր աշխատանքները, այնպես ել նրա անցկացումը վերցնել իր անմիջական դիտողության և ղեկավարության ներքո, հավաքագրել և վորպես ժողկոմխորհի լիազորներ՝ անասունների ցուցակագրությունը տեղերում անցկացնելու համար շրջաններին ոգնելու նպատակով ուղարկել պատասխանատու աշխատավորների։

2. Պարտավորեցնել շրջգործկոմներին.

ա) ապահովել գյուղական խորհուրդների և շրջխորհուրդների ներկայացուցիչների մասնակցությունը անասունների ցուցակագրությունը ձմեռային արոտատեղիներում անցկացնելու գործում, անկախ նրանց գտնվելու վայրից, այդ նպատակի համար արոտատեղիներն ուղարկելով հատուկ բրիգադներ.

բ) ապահովել ցուցակագրության ամբողջ աշխատանքը փոխադրական միջոցներով, ինչպես շրջանում, այնպես ել արոտատեղիներում.

գ) մասնակցել հանրապետական ժողովրդատնտեսական հաշվառքի Վարչության կողմից ի-

բենց շրջաններում անցկացրած անասունների հաշվառքի վերջնական արդյունքների հաստատման աշխատանքներին։

IV. Պարտավորեցնել Անդր. Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Վարչության՝ Անդրժողկոմխորհին ներկայացնել անասունների ցուցակագրության նախնական արդյունքները 1936 թ. փետրվարի 20-ին։

V. Թույլատրել Անդր. Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Վարչությանը անասունների հաշվառքն անցկացնելու համար հավաքագրված ժամանակավոր աշխատավորների աշխատավարձից սոցիալական ապահովագրության մուծումներ չկատարել։

Անդրժողկոմխորհի նախագահ՝
ՄՈՒՍԱԲԵԿՈՎ.
Անդրժողկոմխորհի և Անդր. Գ.Տնտ.
քարտուղար՝ Զ. ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ 1936 Թ. ՀՈՒՆՎԱՐՅԱՆ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անասունների 1936 թ. հունվարյան ցուցակագրությունն ԱՍՖՍՀ-ում անցկացնելու համար ստեղծել պարգևատրման ֆոնդ 20,000 ռուբլու չափով։

2. Վերոհիշյալ ֆոնդից պարգևատրել՝ Անդրկովկասյան Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի Վարչության պետի հանձնարարությամբ՝ այն անձանց, որոնք աչքի են ընկել անասունների ցուցակագրության ընթացքում, ինչպես որինակ, շրջանային գործադիր կոմիտեների և գյուղխորհուրդների նախագահներին, անասունների ցուցակագրությունն անցկացնող՝ հանրապետությունների կենտկոմների և Ժողկոմխորհների լի-

ագրոնոմներին, ժողովրդա-տնտեսական հաշվառքի շրջանային և յենթաշրջանային տեսուչներին և հողային որգանների աշխատողներին, վորոնք առանց վորևե թերության, ապահովել են ամբողջ անասունի ընդգրկումը ցուցակագրությամբ թե գյուղական վայրերում, թե քաղաքներում, թե քաղաքային տիպի վայրերում և թե ձմեռային արոտատեղիներում, վորոշված ժամկետին և ներկայացրել են ցուցակագրության ու կոնտրոլ շրջագայության տվյալները, այլև առանձին կոլխոզնիկների, վորոնք նշանակալից ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նշանակված ցուցակագրության անցկացման գործում։

Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝
Ֆ. ՄԱԽԱՐԱՁԵ

Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Ս. ԹՈԴՐԻԱ

ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՊԼԱՆԸ

«ՀԱՇՎԱՌՔԸ—ԴԱ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՉԵ, ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾ»։ («ՊՐԱՎԴԱ»)

Մեր կուսակցության և բոլոր աշխատավորների առաջնորդ մեծ ՍՏԱԼԻՆԸ առաջավոր կոմբայնավարների և կոմբայնավարուհիների խորհրդակցությանը՝ 1935 թ. դեկտեմբերի 1-ին՝ արտասանած իր պատմական ճառում ասաց.

> «Քաղաքների աճումը, տեխնիկական կուլտուրաների աճումը, բնակչության ընդհանուր աճումը, ունեվոր կյանքը,— այս ամենը տանում է դեպի մսի, հարպի պահանջի աճումը։ Անհրաժեշտ է, հետևապես, ունենալ լավ դրված անասնաբուծություն, մեծաքանակ մանր ու խոշոր անասուն, նրա համար, վորպեսզի հնարավոր լինի բավարարել բնակչության աճող պահանջները մսամթերքների վերաբերմամբ»։

Առաջնորդի այս խոսքերը քաղաքական մեծ խնդիրներ են դնում նաև Ժողտնտհաշվառքի որգանների առաջ անասնաբուծության բնագավառում, վորովհետև անասնաբուծության զարգացման գործում հետագա հաջողությունների գրա-

վական և հանդիսանում անասնաբուծության վիճակը ճիշտ արտացոլող՝ որինակելի դրված հաշվառքը։ Հետևապես Ժողտնտհաշվառքի որգաններին կողմից կատարվելիք անասունների առաջիկա ցուցակագրությունը պետք է անցկացվի բարձր վորակով, վորպես մեծ կարևորության քաղաքական խնդիր։

ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1936 թ. հունվարի 1-ի անասունների ցուցակագրությունը ԱՍՖՍՀ Հանրապետության մեջ անց է կացվում Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի որգանների կողմից, ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. հոկտեմբերի 16-ի և ԱՍՖՍՀ Ժողկոմխորհի 1935 թ. նոյեմբերի 27-ի վորոշումների հիման վրա։

Ներկա ցուցակագրությունը գանազանվում է նախորդներից նրանով, վոր բացի անասունների քանակի ու կազմի մասին ճշգրիտ տվյալներ հայտնաբերելուց, պետք է ստուգի անասնաբուծության զարգացման պետական պլանի կատարումը. ցուցակագրության տվյալների հիման վրա հանդագումարի յեն յենթարկվելու անասնաբուծության զարգացման վերաբերյալ Հյուսիսային Կովկասի յերկրամասի հետ Անդրկովկասի կնքած սոցիալիստական մրցակցության արդյունքները։ Ցուցակագրությունը ցույց կտա, թե անասնաբուծության ինչպիսի արդյունքներով են յեկել 1936 թ. հունվարի 1-ին պետական և կոոպերատիվ անտեսությունները, ամեն մի շրջան, ամեն մի կոլխոզ, կոլխոզնիկ և մենատնտես։

Համ. Կ (բ) Կ Անդրյերկկոմի և ԱՍՖՍՀ Ժողկոմխորհի դրած քաղաքական մեծ խնդրի կատարումը — լիովին հաշվառքի յենթարկել Անդրկովկասի ամբողջ անասունը, պարտավորեցնում է շրջանային բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններին և Անդրկովկասի Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի մարմիններին՝ անցկացնել այս ցուցակագրությունը բավականին զգալի բարձր մակարդակով, համեմատած վոչ միայն 1935 թ. անասունների հարկային հաշվառքի հետ, այլ և անասունների ընթացիկ տարվա հունվարյան ցուցակագրության հետ։

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԿԱԴՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցուցակագրության աջող անցկացման և բոլոր անասուններին լիովին ընդգրկելու հիմնական պայման հանդիսանում է ցուցակագրության շուրջը լայն մասսայական-բացատրական աշխատանքի կազմակերպումը։ Ցուցակագրության անցկացման ամբողջ ընթացքում, ամբողջ հասարակայնությունը, ինչպես Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի վարչություններում, այնպես և տեղերում, շրջաններում և գյուղխորհուրդներում՝ ու-

շաղրության կենտրոնում պետք է դրված լինեն անասունների ցուցակագրության հարցերը։ Տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները բնակչության մեջ անցկացվելիք մասսայական-բացատրական աշխատանքներում պետք է ընդգծեն անասնաբուծության զարգացման պետական պլանի ստուգման և Հյուսիսային Կովկասի յերկրամասի հետ սոցմրցակցության արդյունքները հանրագումարի յենթարկելու հետ կապված այս ցուցակագրության հատուկ խնդիրներն ու նշանակությունը։

Լայն ծավալած մասսայական-բացատրական աշխատանքների և ցուցակագրության ճշգրիտ ղեկավարման հիման վրա, տեղա՛յն շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է ապահովեն ցուցակագրող կադրերը ամենամանրամասն հրահանգումներով՝ ցուցակագրության անցկացման ձևերի և ցուցակագրության ընդհանուր սվյալներն իր ժամանակին կենտրոն ներկայացնելու մասին։

Տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները ցուցակագրության նախապատրաստման և անցկացման համար պետք է լայն կերպով ոգտագործեն՝ սոցիալիստական մրցակցության և հարվածայնության փորձված մեթոդը ինչպես շրջանների, նույնպես և առանձին գյուղխորհուրդների, կոլխոզների, սովխոզների և այլնի միջև, ներդնելով աշխատանքի հարվածայնության—ստախանովյան մեթոդի բարձր ձևերը։ Մասսայական աշխատանքը պետք է իրեն նպատակ դնի՝ ոգնել Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի մարմիններին քաղաքական խնդրի կատարման գործում հաշվի առնել շրջանի վողջ անասունը ամառային արոտատեղիներում յեվ ցուցակագրությունը շրջանում անցկացնել գերազանց։ Շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպությունները գյուղական խորհրդակցությունների, կոլխոզնիկների ընդհանուր ժողովի, գյուղական պատի թերթի և այլն միջոցներով պետք է լայն կամպանիա ծավալեն վողջ անասունը ցուցակագրությամբ ընդգրկելու համար, իրենց խնդիր դնելով և իրականացնելով՝ վոչ մի գլուխ անասուն առանց հաշվառքի խնդիրը։ Անցկացվող մասսայական-բացատրական աշխատանքում մեծ դեր պետք է խաղա մամուլը, պարբերաբար լուսաբանելով իր եջերում ցուցակագրության հարցերը, ցուցակագրության խնդիրներն ու նշանակությունը, նախապատրաստական աշխատանքների ընթացքը, ցուցակագրության անցկացման ու արդյունքների քննարկումը։

Ցուցակագրության անցկացումից հետո անհրաժեշտ է կազմակերպել տեղերում ցուցակագրության արդյունքների և ամեն մի տնտեսության անասնաբուծության զարգացման պետական պլանի կատարման լայն քննարկում։ Անասնաբուծության հարցերի վերաբերյալ սոցպայմանագրով իրենց վրա պարտավորություններ վերցրած շրջաններում, գյուղխորհուրդներում, կոլխոզներում անհրաժեշտ է հանրագումարի յեն-

թարկել սոցմրցման արդյունքները, քննարկելով այն կուսակցական կազմակերպություններում և բանվորների, ծառայողների ու կոլխոզնիկների ընդհանուր ժողովներում։

Կուսակցական և խորհրդային կազմակերպությունների կողմից անցկացվող մասսայական-բացատրական աշխատանքը պետք է մոբիլիզացիայի յենթարկի դասակարգային զգոնությունը ցուցակագրության հարցերի շուրջը՝ դասակարգայնորեն թշնամի տարրերի հնարավոր փորձերը կանխելու համար, վորոնք կփորձեն արգելել, խանգարել ցուցակագրությունը։

Սոցիալիստական Սեկտորի (սովխոզներում, կոլխոզներում, կոոպխոզներում և այլն) բոլոր տնտեսություններում ցուցակագրության լավագույն անցկացման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել ցուցակագրությանն աջակցող հատուկ բրիգադներ, կազմված կուսակցական, արհեստակցական, կոմյերիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից, կոլխոզային ակտիվից յեվ այլն։

Ցուցակագրությանն աջակցող բրիգադները պետք է ամենից առաջ հսկողության տակ վերցնեն անասունների գույքավորման աշխատանքը։ Այդ նույն բրիգադները ոգնում են քննողներին (ցուցակագրողներին) կազմակերպելու անասունների քանակի ստուգումը, մասնակցում են այդ ստուգումներին, կազմակերպում են ցուցակագրության արդյունքների քննարկումը բան-

վորների և ծառայողների ժողովներում, կոլխոզնիկների ընդհանուր ժողովներում, հանրագումարի յենթարկելով ամեն մի տնտեսության՝ պետական առաջադրանքի կատարման արդյունքը։ Ցուցակագրողին աջակցություն ցույց տալու համար, անհատական ոգտագործման անասունների ցուցակագրումն անցկացնելու և բոլոր անասուններն ցուցակագրությամբ լիովին ընդգրկելու համար, (կոլխոզնիկների, մենատնտեսների և այլ տնտեսությունների մոտ) գյուղխորհրդում կազմակերպվում է աջակցող բրիգադ՝ վորի կազմի մեջ մտնում են գյուղխորհրդի անդամները, կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների ներկայացուցիչները, կոլխոզների վարչությունների և կոլխոզային ակտիվը։ Աջակցող բրիգադը պետք է ձգտի բոլոր անասունների լիակատար հաշվառմանը, պայքարելով հաշվառումից հնարավոր բացթողումների և անասունների թագցնումի դեմ։ Բաց թողնելու, հաշվառումից դուրս մնալու և անասունները չարամտորեն թագցնելու բոլոր դեպքերում, ցուցակագրության նյութերի մեջ մուծվում են համապատասխան ուղղումներ և չարամիտ թագցնումների դեպքերում կազմվում են հատուկ արձանագրություններ։ Բրիգադը մեղավորների գործը հանձնում է դատախազության, քրեական պատասխանատվության յենթարկելու կարգով ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի 1935 թ. դեկտեմբերի 4-ի վորոշման համապատասխան և

անհապաղ կազմակերպում է ցուցադրական դասավարություն։

Շրջանային կուսակցական յեվ խորհրդային մարմինները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն չարամտորեն անասունները թագցնելու յեվ վոչ ճիշտ տեղեկություններ տալու հետեվանքով հայտնաբերված գործերն անպայման յեվ շտապ կարգով քննելու համար, կազմակերպելով մի շարք ցուցադրական դասավարություններ։

Շրջանային կազմակերպությունները պարտավոր են ապահովել ցուցակագրության անցկացման բոլոր աշխատանքները ինչպես շրջանում, այնպես և արոտատեղիներում անհրաժեշտ տրանսպորտային միջոցներով, վոչ մի դեպքում թույլ չտալով աշխատանքների ընդհատում տրանսպորտի բացակայության պատճառով։

Ցուցակագրության աջող անցկացման գործում հատուկ նշանակություն ունի կադրերի ընտրությունը (ցուցակագրողներ, հսկիչ շրջագայումների մասնակիցներ, բրիգադիրներ և այլն)։ Շրջանում ցուցակագրությունը կատարելու համար ներգրավված բոլոր աշխատողները հաստատվում են շրջգործկոմի նախագահության կողմից։ Ցուցակագրողների յեվ ցուցակագրության ղեկավարների կադրերը կոմպլեկտավորվում են բաղաքականապես ստուգված յեվ տեխնիկապես գրագետ տեղական աշխատողներից, ուսուցիչներից, ագրո-զոոտեխնիկներից, անասնաբուժներից, ուսանողներից, գյուղխորհուրդների և կոլխոզների աշխատողներից և այլն։

Ցուցակագրությանը մասնակցելու համար լայն կերպով ներգրավվում են անասնաբուծության լավագույն հարվածայիններն ու ստախանովականները։

Հսկիչ շրջագայումներ անցկացնելու ժամանակ, վորպես բրիգադիրներ, պետք է մոբիլիզացիայի յենթարկվեն շրջանային կուսակցական յեվ խորհրդային ապարատի պատասխանատու աշխատողները։

ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ

Ցուցակագրությունն անց է կացվում ԱՍՖԽՀ գյուղական վայրերում և քաղաքներում, ընդգրկելով անասունների բոլոր տեսակները առ 1-ն հունվարի 1936 թ. անասունների առկա դրության, անպայման հաշվելով նատուրայով (վոչ մի դեպքում ցուցակագրության միջոցին թույլ չտալով հարցումներ)։

Ցուցակագրության ծրագիրը նախատեսում է անասունների առկա բաշխումը համաձայն տնտեսությունների սոցիալական սեկտորի, կատեգորիաների և խմբերի։

Առաջին անգամ պետական և կոոպերատիվային տնտեսություններում, ինչպես և կոլխոզներում կատարվում է և մեղու-ընտանիքների ցուցակագրություն։ Հատուկ կարգով հանրապե-

տական և շրջանային կազմակերպությունների միջոցով հաշվի չեն առնվում նաև կարմիր բանակի զորամասերին և ՆԳԺԿ գյուղատնտեսական ձեռնարկություններին պատկանող անասունները։

Գյուղական վայրերում ցուցակագրության յենթարկվում են տնտեսությունների բոլոր կատեգորիաները, գյուղատնտեսական հարկով հարկվող և չհարկվող՝ ինչպես անասուններ ունեցողները, այնպես և չունեցողները։ Իսկ տնտեսությունների գրքում գրանցվում են բոլոր տնտեսություններն, անկախ անասունների առկա թվից։

Քաղաքային վայրերում ցուցակագրությամբ ընդգրկվում են բոլոր անասիրությունները և մասնավոր տնտեսությունները, առանձին տնտեսության ցուցակներում մտցվում են միայն անասուններ ունեցողները։ Յերնելով ԱՍՏԽՀ մերձլեռնային և նախալեռնային շրջանների կլիմայական առանձնահատկություններից, վորտեղ վաղ և խիստ ձմռան ու ճանապարհազրկության կապակցությամբ ցուցակագրության անցկացումը ընդհանուրի համար սահմանված ժամկետում հանդիպում և մեծ դժվարությունների, այդ շրջաններում ցուցակագրությունն սկսվում և հատուկ հաստատված ցուցակով, ժամկետից շուտ, կոլխոզնիկների և մենատնտեսների մոտ դեկտեմբերի 15—20-ը, իսկ այդ շրջաններում՝ սոցիալիստական սեկտորի (պետսեկտոր և կոլխոզները) անասունները ցուցակագրվում են առ 1-ն հունվարի 1936 թ. դրությամբ։

Անասունների ցուցակագրման առաջ կանգնած կարևորագույն քաղաքական խնդիրները պարտավորեցնում են Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի հանրապետական վարչություններին, ինչպես և շրջտեսչություններին, լուրջ և խոր քննադատության յենթարկել ցուցակագրության հետևանքով ստացված հանրագումարային տվյալները։ Դրա համար անհրաժեշտ է պատրաստել ամեն մի շրջանի անասնաբուծության դրության վերլուծումը։ Բացի դրանից, ցուցակագրությունն անցկացնելու ժամանակ, յերբ, չնայած ձեռք առնված միջոցներին, կնկատվեն 1935 թ. հունվարյան ցուցակագրության տվյալների դիմաց անասունների թվի թեկուզ աննշան անկում, կամ աննորմալ ցածր աճ, նույն թվականի տվյալների դիմաց, կամ վորևե հիմքի բացակայության դեպքում, կամ մի շարք պատճառների հետևանքով կասկած առաջ կգա վողջ անասուններին ցուցակագրությամբ լիովին ընդգրկելու միջոցին — նման բոլոր դեպքերում անպայման անցկացնել յերկրորդ ցուցակագրություն համապատասխան գյուղխորհուրդներում, կամ ամբողջ շրջանում, վերջին դեպքում համաձայնեցնելով հարցը հանրապետությունների ԺՏՀՎ հետ։

Անասունների փաստական վողջ քանակությունը ցուցակագրությամբ ընդգրկելու կամ թեկուզ աննշան բացթողումներ թույլ չտալու և

անասունների փաստական քանակից չշեղվելու նպատակով, ձմեռային արոտատեղերում գտնված շրջանի բոլոր անասուններն պետք է ընդգրկվեն ցուցակագրությամբ յեվ հաշվվեն նատուրայով հսկիչ շրջագայումների միջոցով: Ցուցակագրությամբ անհրաժեշտ է ընդգրկել ձմեռային բոլոր արոտատեղերը, վոչ մի դեպքում թույլ չտալով արոտատեղերի առանձին տեղամասերի բացթողում:

Ձմեռային արոտատեղերում բոլոր անասուններն անպայմանորեն ցուցակագրությամբ ընդգրկելու և հաշվառքի բարձր վորակն ապահովելու համար, Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի մարմինները, տեղական կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ոգնությամբ, պետք է գործուղեն այնտեղ ավելի վորակյալ բրիգադներ՝ Ժող.-Տնտեսական Հաշվառքի և Հողժողկոմատի մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Արոտատեղերը պետք է ուղարկվեն նաև այն շրջանների կամ գյուղխորհուրդների բրիգադները, վորոնց անասունները գտնվում են տվյալ արոտատեղերում, ըստ վորում այդ բրիգադները պարտավոր են ցուցակագրվել ԺՏՀՎ տվյալ ձմեռային արոտատեղերի լիազորի մոտ և անասունների ցուցակագրությունը կատարել ձմեռային արոտատեղերի լիազորի անմիջական մասնակցությամբ:

Արոտատեղերում անասունների վողջ քանակը լիովին ընդգրկելու նպատակով, բրիգադի

կողմից անասունների հաշվումը նատուրայով կատարելուց հետո, հովվին տրվում է համապատասխան ստանդարտ տեղեկանք այն մասին, վոր նրա սպասարկած անասունները ցուցակագրված են բրիգադի կողմից:

Արոտատեղերում ցուցակագրության արդյունքները ստուգելու համար, տվյալներն անպայման համեմատվում են անասունների քանակի մասին գյուղխորհուրդների տվյալների հետ, վոր ուղարկված են տվյալ արոտատեղերը, վորի համար շրջանների ներկայացուցիչները գալիս են արոտատեղ, արոտատեղում գտնված և տվյալ գյուղխորհրդի տնտեսություններին պատկանող անասունների քանակի վերաբերյալ գյուղխորհրդի տեղեկանքներով:

Այն դեպքում, յերբ արոտատեղի ցուցակագրության հանրագումարը ցույց է տալիս անասունների պակաս քանակ, քան գյուղխորհրդի տվյալներով—անհրաժեշտ է արոտատեղում անցկացնել յերկրորդ ցուցակագրություն:

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերահսկիչ շրջագայություններ կատարվում են ինչպես քաղաքային, նույնպես և գյուղական վայրերի կոլխոզնիկների, մենատնտեսների, բանվորների և ծառայողների տնտեսություններում, ցուցակագրությունն անցկացնելուց հետո՝ ստուգելով անասունը նատուրայով ամեն մի տնտե-

սության մեջ։ Համ. Կ (բ) Կ Անդրյերկկոմի և ԱՍՖՈՀ ժողկոմխորհի վորոշմամբ՝ վերահսկիչ շրջագայությունները պետք է անցկացվեն շրջանի վոչ պակաս քան 15 տոկոս տնտեսություններում։

Վերահսկիչ շրջագայություններն անց են կացվում վոչ այն բրիգադներով, վորոնք անց են կացրել ցուցակագրությունը, այլ հատուկ բրիգադների կողմից, վորոնց կազմի մեջ մտնում են գյուղխորհուրդների (քաղխորհուրդների) կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների ներկայացուցիչները, կոլխոզային և պրոֆակտիվը՝ շրջանային կենտրոնի ղեկավար աշխատողի գլխավորությամբ։

Վերահսկիչ շրջագայությունների նպատակն է — լիովին յերևան բերել բոլոր անասունները, վոր բաց է թողել ցուցակագրողը կամ ցուցակագրությունից չարամտորեն թագցնողներին, ինչպես և հայտնաբերել ցուցակագրությունից բոլորովին դուրս մնացած տնտեսություններին։

Վերահսկիչ շրջագայություններ անցկացնող բրիգադները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն մատղաշի և մանր անասունի հաշվառքին, վորովհետև անցյալ հաշվառքների փորձով այդ անասունների խմբերի վերաբերմամբ յերևան են հանել հաշվառքից դուրս մնալու և թագցնելու շատ դեպքեր։

Շրջանում անցկացվող վերահսկիչ շրջագայությունները, վոր անց է կացվում ցուցակագրությունից հետո, բացառիկ կարևոր նշանակություն ունեն, վորովհետև վերահսկիչ շրջագայությունների արդյունքներով պետք է վորոշվեն շրջանի առկա անասունների վերջնական արդյունքները։ Վերահսկիչ շրջագայությունները, նրանց լավագույն կազմակերպմամբ յեվ անցկացմամբ պետք է ապահովեն հաշվի չառնված յեվ թագցրած անասունների վողջ քանակի հայտնաբերումը շրջանում։ Լավագույն կերպով կազմակերպված յեվ անցկացված վերահսկիչ շրջագայությունները, պետք է անպայմանորեն հայտնաբերեն հաշվառքից դուրս մնացած յեվ չարամտորեն թագցրված անասունների վողջ քանակը։ Շրջանային կազմակերպությունները, հաշվի առնելով հիշյալ աշխատանքների առանձին կարևորությունն ու պատասխանատվությունը, պետք է շրջագայություն անցկացնող բրիգադներն ապահովեն շրջանային կուսակցական խորհրդային ապարատի առավել պատասխանատու աշխատավորների կազմով։

Հանրապետական ԺՏՀՎ և տեղական շրջանային կազմակերպությունները վերահսկիչ շրջագայություններ անցկացնելու ժամանակ պարտավոր են հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր ժամենտների վրա. առաջին՝ մեծանասնեսների անասունների հաշվառքի վրա, նկատի ունենալով, վոր հարկման բարձր դրույքները մենատնտեսների վերաբերմամբ (համեմատած կոլխոզնիկների հետ), դժվարացնում են մե-

նատնտեսների անասունների քանակի ճիշտ հայտնաբերումը վոչ միայն հարկային հաշվառման ժամանակ, այլ և անասունների ցուցակագրման ժամանակ, և յերկրորդ՝ միևնույն այժմ տեղ գտած անորմալ յերեվույթի վրա, յերբ ուղղումների կոեֆիցիենտը մենատնտեսների անասունների բոլոր հիմնական տեսակների նկատմամբ պակաս է, քան կոլխոզնիկների, վորը վկայում է մենատնտեսների անասունների թերահաշվառման մասին, նույնիսկ հսկիչ շրջագայությունները անցկացնելուց հետո։

Ձմեռային արոտատեղերում գտնված անասունների քանակի մասին ել ավելի ստույգ տվյալներ ստանալու համար, վերահսկիչ շրջագայություններ կատարվում են ձմեռային բոլոր արոտատեղերում, վորի համար հիշված վերահսկիչ շրջագայությունները անց են կացնում վոչ այն բրիգադները, վորոնք կատարել են ցուցակագրությունները։ Տեղական շրջանային կազմակերպությունները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն վերահսկիչ շրջագայությունների անցկացմանը ձմեռային արոտավայրերում, ինչպես շրջագայությունները կազմակերպելու, նույնպես և ապահովելով նրանց ավելի վորակյալ բրիգադներով, հաշվի առնելով այդ աշխատանքի բարդությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, վոր տվյալ արոտատեղի անասունները պատկանում են տարբեր շրջանների և գյուղխորհուրդների, ինչպես և այն հանգամանքը, վոր անասունները շարժման մեջ են գտնվում։

Վերահսկչական ստուգումների համար կետերի ընտրությունը կատարելը, իսկ ձմեռային արոտատեղերում—բինների կամ արոտատեղերի տեղամասերի ընտրությունը կատարվում է Ժողովրդա-Տնտեսական Հաշվառքի հանրապետական մարմինների կողմից, Անդրժողտնտհաշվառքի ցուցմունքի համաձայն։ Ընտրված կետերի ցուցակը յենթակա չէ հրապարակման։

Անդրկովկասի Ժողովրդա-Տնտեսական հաշվառքի բոլոր որգանների աշխատավորների առաջ խնդիր է դրված՝ ուժերի մաքսիմալ լարման և ցուցակագրության գործի ճշգրիտ կազմակերպման միջոցով հասնել ցուցակագրությունն անցկացնելու բարձր ցուցանիշների։

Անցկացվող ցուցակագրությամբ հայտաբերվող բոլոր կարևորագույն խնդիրները, կարող են իրականացվել միայն այն պայմաններում, յերբ շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ղեկավարները, համաձայն Համ. Կ (բ) Կ Անդրյերկկոմի և ԱՍՖՍՀ Ժողկոմխորհի վորոշման, յեռանդուն կերպով կդաղվեն անասունների ցուցակագրության անցկացմամբ, այդ գործի համար մոբիլիզացիայի յենթարկելով լավագույն աշխատավորների, քննության առնելով ցուցակագրության ընթացքը և այդ միջոցին ուղղելով յերևան բերված թերությունները, միաժամանակ ամենորյա կոնկրետ ողնություն ցույց

տալով Ժողովրդա-Տնտեսական հաշվառքի Անդրբկովկասյան մարմիններին, և վորպես հետևանք այդ բոլորի—ապահովել ամբողջ անասունի ընդգրկումը ցուցակագրությամբ, առանց վորևէ թերության։

ՀԱՍ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ՍՍՀ
Ա. Մեսրոպ

Сел.-хоз. отдел ЗКК ВКП (б)

Закавказское Управление Нархозучета

К Всесоюзной переписи скота

На 1-ое января 1936 г.

(Материалы для районного актива)

На армянском языке.

Ответ. редактор К. ДЖАПАРИДЗЕ

«Ազգային գրադարան»

NL0191959